


մէջ պապը ողջ է, ինքն է միակ հայրն. և զինքը հայր կը կոչէ՝ ոչ միայն իւր որդին, այլ և նորա որդին ևս. իսկ վերջինս իւր բուն հօրը պարզապէս եղբայր անունը կու տայ, որ թուրքերէն կ'ըսուի ախպար քճճ։ Ունա զողորմիկ և անուսահտ ծաղիկ մի ընտանեկան կենաց պարտիդին մէջ. մինչ զեռ բոլորովին խոյթող փուշ մ'է, ինչպէս կ'ընեն, պարզ մկրտութեան անուամբ կոչել մայրը, Սննա, Հոխիսիմէ, իսկուհի, և այլն, այնպէս որ չի լսուին այն զգայուն բառերը. մայրիկ, մայրիկ չափ, և մինչև անգամ ոսկեմայրիկի (madre d'oro), ինչպէս կը գտնուին աշխարհիս վերայ մարդիկ՝ որք այսպէս կը կոչեն լի զորովով և պանծանօք։

Վերջապէս, եթէ ուզենք աստ զանազան մարդկանց բարբը ու սովորութիւնները իրեւրաց հետ բազդատել, թէ՛ մեծ և թէ՛ փոքր կրեբու մէջ, մենք ամենին ձանձրոյթ պիտի չի գզանք. ուստի, ամփոփելով մեր խօսքը, զարձընենք մեր աչքը արևմուտքէն դէպ ի արևելք, — միայն թէ պատճառաբանելու և հետևութեանց յանդելու համար վկայութիւնք պէտք է արժանահաւատ լինին, — և տեսնենք թէ արդեօք մեզի, որ թէ և հետաքրքրե՞ բայց զինքը սիրող ենք, ինչ պատասխան պիտի տայ արևելքը...

Ի Պաղատա, 1896. Եմիլ Տեզա



ՌՆՂԵՆՈՐՈՒԹԻՒՆ Ի ՀԱՅՍՏ\*



ՀԱՅ ազգն աշխարհիս ամենահին ժողովուրդներէն մին է... որոյ խանձարուրքն է Ալբարատ կամ Մասիս լեռն, իւր գետն

\* Կերկայ զրութիւնս քաղուածոյ է Contemporary Review թերթի 1896 տարուայ նոյեմբերի համարին մէջ գտնուած Theodore Bentի Ուղեւորութիւնք Ի Հայս խորագրու մէկ յուշագրութիւն։

է՛ Երասխ, իսկ լինն է՛ Ուրմիս<sup>1</sup>։ Իսկ նորա աշխարհն բաժնուած է երեք պետութեանց մէջ, Ռուսիոյ, Թուրքիոյ, և Պարսկաստանի։

Այս տեղ մամրամամ կը Սկարագրէ յօդուածագրն յիշեալ երեք պետութեանց հպատակ հայրուս միմտիկ և զրութիւն։ Երկրիմ արևելեամ կողմը՝ հրէից մմամ ցուած են հայք, կ'ըսէ, և մոցապէս հնարագէտք՝ մարտար և խորամանկ են գործոց և առուտուրի մէջ, զոր արդիւնք կը համարի այմ միշտ ցրուելու և գաղթիլու հակամէտ քաղաքակամութեամ կամ զրութեամ, որ սկսեր է թուգանդակամ կայսրոց ժամանակէմ և կը շարուս մակուծ միջն ցարդ։ Այմ սակաւ և թոյլ զնմազրութիւնմ՝ զոր ի գործ զրեր է հայ ազգմ իւր ցըրմամ արդիւնք է, կ'ըսէ հեղինակն, իրեն բազմապատիկ դաւամութեանց և զամոնք ստէպ փոփոխիլու զերութեամ՝ որք յայտնապէս կ'ընեն մորա մէջ։ Ինչպէս բնական է, կը յաւելու մաւ գամագամ դաւամանք և կրօնք առելութիւմ յառաջ կը բերնմ ժողովրդեան մի մէջ և այնու պատակտուսմ և ամմիաբամութիւմ յամմմայնի։

Հայոց աւանդութիւնք զարմանալիք են... Բազմութիւ տեղական զրոյցներ ունին. օրինակ իմն, Տարսանի մէջ (ի կիլիկիա) շատ կը խօսուի Ս. Պաւղոս առաքելոյն մասին։ Նոյն տեղոյ եկեղեցին կառուցուած է առաքելոյն հիմնած հին շէնքի մի վերայ, և զերեզմաննոցին մէջ կը տեսնուի տակաւին ծառ մի, որ՝ ըստ աւանդութեան՝ նոյն առաքելոյն տակեր է։ Այնոր շուրջ կը զըստուին հայոց շիրմներն, որոնք զարդարուած են իւրաքանչիւր հանգուցելոյն արուեստը ցուցընող խորհրդական առարկաներով. վաճառականին շիրմին վերայ կը տեսնուին կշիռք և չափք, իսկ զարբնոյն՝ ուռն և սալ, և այլն։ Կր ցուցընեն զարձեալ Ս. Պաւղոսի տունը և ջրհորը, ուր հաւատացեալք ուխտի կ'երթան։ Սիս, որ կամօղիկոսանիստ քաղաք է, նըշանաւոր իւր հնութեամբն և պատմական յիշատակներով, որ ծաղկեցաւ երբեմն իսլայկրաց ժամանակները, ներկայապէս ողորմելի աւանի մի երեւոյթն ունի՝ միջնաբերդին ներքև շինուած, ուր 550 տարի յառաջ կը բարձրանայր արքունի սպարանքն և Այնոր

1. Լաւագոյն էր բսել վիանայ ծովն. կ'երևի թէ յօդուածագրին վաճայ կողմերը չէ պտըտած, այն պատճառաւ ևս չէ յեշած զայն։

խեղճ տնակներն՝ մին միայն վերայ կարծես մտադրելով վեր կը բարձրանան մինչև ի շրջապատան մեծ մենաստանին, ուր որ կաթնօղիկասին աթոռն է: Ամբողջ քաղաքը երկու մասի կը բաժնուի երկայն փողոցով մի, որ պարզ կ'ըլլու, ուր տանալմանուի օրերը խանութներն կը տեճուի բազմութիւն մի ուղտերու, շորիներու և գոյղգոյն սարազուք լեռնականներու, մինչդեռ արիւ լոկ օրերու մէջ կ'ամայանայ բոլորովին: ... Բնակչաց ազգանուններն ընդհարապէս հնչունք են, և մեծաւ մասամբ նոցա ունեցած արուեստը կը նշանակեն: ...

Այս տեղ մոցա գործածած լեզուիմ վերայ կը խօսի. մոյնպէս Մոսկ և չէջիմածի կաթնօղիկոսաց վերայ, մոցա պատմութիւնը համարտելով. և ի մասնաւորի Մոսկ համագոցեալ Մկրտիչ կաթնօղիկոսով վերայ կը խօսի, թէ ինչպէս ճաքսն չէր մտեր ի Միս, այլ ընդհանրապէս Մարաշու լեռանց վերայ կը բնակէր, միշտ իւր հետ շրջեցընելով Ս. Գրիգոր Լուսնարիչ օրհմնալ քաղաքը, և միայն միւտի օրհմութեամ արարողութիւնը կատարելու համար կ'իջնէր ի քաղաքը: Դարձեալ կաթնօղիկոսաբանը կը յիշէ, որ թէպէտ մեղրկայապէս ողորմելի կացութեամ մէջ է, կ'ըսէ, այլ ժամանակաւ շատ ճոխ և շքիղ եղեր է, այլ և այլ մկարուք գունագեղեալ, որուն համար յատկապէս արուեստատրմիք բեւրած եմ զարկատառնէմ: Գովեստիւք կը յիշէ մնամապէս եկեղեցիք, որոյ մէջ կը տեսնուի շատ հոյ սքրքոց պատկերները: Ոչ սակաւ հիացմամբ կը խօսի մոյնպէս միւտնի օրհմութեամ արարողութեամ վերայ, յորում սակայմ կը պարսաւէ այնպիսի գեղեցիկները, որոնք կարող եմ սարղիլ մոյն իսկ ամեմէք աւելի սուր և ծուիրակամ իրաց և ծիսից մէջ, մնմանով երբ ոմամք շահախըմդութեանց մպատակ և աւարկալ կը դարձունն գանձը: Կը շարունակէ յետոյ.

Կաթնօղիկոսն իւր ծախուք կատուցեր է վարժարան մի, ուր կ'ուսանին բազմաթիւ ազայք գաղղիներէն և թուրքերէն լեզուները, գրահաշիւ, ասաղաբաշխութիւն և բնարանութիւն: Աշակերտք լի խանգով երգ մի երգեցիկ պպրցի հիմնադրին և նորա ընկերակցող ուղեորացս առջև. այլ փորթիկ աշակերտներն, երբ կ'աւարանն իրենց ուսումնական շրջանը, կ'երթան յետոյ ուսուցանելու շրջակայ լեռնային գիւղակներու մէջ:

Հին միջնաբերդն, դաշտէն 2000 ոտք բարձրութեան վերայ շինուած, և երբք մա-

սանց բաժնուած երբք սեպաձև ժայռերէ և շրջապատեալ պարսպով մի՝ որ գրեթէ ողջ և անարատ մնացեր է, լի է եկեղեցեաց, պաշտաներու, բանտերու և ռազմագիտական տեսութեամբ կարևոր շինուածոց աւերակներով: Անկեան մի մէջ կը հոսի մշտաբախ ջրոյ առուակ մի, ուստի կ'երթան ջուր առնելու այն ամէնքը, որոնք կարող են թողուլ յիսր, որ ամառ ժամանակ վատասող է ջերմոտ է, և երթալ լեռնային խաչաքները:

Մոյն եկեղեցւոյմ և կղերի կացութեամ մասին խօսելով յամկարծ հեղինակիմ գովեստից խումկերը պարսաւածաց փայլակներու կը փոխուիմ. սաստիկ յոռտեսութեամբ քի եմ իւր խօսքերմ, և ի մասնաւորի կը մեղադրէ այմ սովորութիւնը, որով ստորին դասակարգի պատկամող կղերմ, դրամի կարօտ և ըմտամիքը պահելու ստիպուած, սքրազամ պաշտամաց հետ կը միացըմ ճակ ամեմէք աւելի ստորիմ արուեստները: Կը շարունակէ յետոյ իւր մկարագրութիւնը.

Գրեթէ ամենայն տուն առաջակողմը պատրզամներ ունի. և Հայք գրեթէ իրենց բոլոր կեանքը ստոնց վերայ կ'անցունեն՝ նոյն իսկ խոնաւ և ցուրտ օդերուն. միայն ձմեռ ժամանակ տուններուն ներքին կողմը կ'առանձնանան, որ միթին և բլի մաքուր է: Ամառ գիշերները փայտեայ տափակ տանիքին վերայ կը քնանան: Առաստէ իրիկուն կանայք՝ պատրզամներուն վերայ կեցած՝ հաց կը շաղունեն, ցորենահատ կը մաքրեն, կը հիսեն և կը շաղակրատեն: Նոցա գլուխներին ֆես կը կրեն, զոր աւելի հարուստներն սակի ապարօշով մի կը հաստատեն. և յոյն կանանց պէս թափառաշրթիկ չեն սքրա, այլ միայն երբեմն երբեմն տարւոյն մէջ Ս. Գեորգ կապապովկեցոյ նուիրուած մատուրը ուխտի կ'երթան, որ ժայռելով, ծառերով և ծաղիկներով շրջապատեալ գուարճալի տեղ մ'է: Իսկ արք՝ բարեկազմ, զօրաւոր և յանգուպն են, և շատ կը տարբերին մայրաքաղաքին մէջ բնակողներէն և Չմիւռնիոյ հայ վաճառականներէն: ...

Հայութեան ուրիշ կեդրոն մ'այլ է Չուրա, Սպահանի մօտ և պարսիկ Շահին իշխանութեան ներքև: Չուրայի և սահմանակից լեռնային գիւղերուն Հայք, թերևս աւելի քան զայլս, անաղարատ և հաստատուն ան-

հեր են իրենց ազգային սովորութիւնները և տարազը: Կանայք փողոցաց մէջ կը շրջին իրենց բնիկ ազգային կամրագոյն արքազով, և զօտի մ'ունին մէջքերին՝ արժաթեայ ճարմանցով մի աղուցած: Քուրդ—ի—խալս—յի մէջ, սր լեռնոտ երկիր մ'է Սպահանէն զրեթէ 50 մղոն հեռու, կանայք քող մ'ունին իրենց բերանին վերայ, որովհետև ան—վայել կը համարին ցուցրնել իրենց շրթունքը տարատեստ անձի մի: և հրաման չունին խօսելու արանց առջև, մինչև որ չի ծնա—նին իրենց անդրանիկ զաւակը. և ամուսնու—թեան վեց տարիները չի լրացած՝ չեն կա—րող ազատաբար խօսել և կենակցիլ իրենց ամուսնոյն հետ անգամ:

Ջուլա ունեցած է իւր ամենամեծ բար—զաւանճան ժամանակը, և ի մասնաւորի՝ սու—ֆիական իշխանութեան միջոց՝ քաղաքակա—նութեան և ճոխութեան մէջ այնպիսի կէտի մի հասաւ, որ յայտնի կերպով կը ցուցնէ Հայոց մեծ ընդունակութիւնը քաղաքականութեան, արուեստից և վաճառականութեան մասին, եթէ նպատաւոր հանգամանաց մէջ զանուէր պլզ ազգն. բայց հոս նաև այնպիսի տխուր միջավայրի և աննպաստ դրութեան մէջ կը գտնուին Հայք, որ զրեթէ բոլորովին շիջեր է իրենց մէջ այն բնիկ գործունեան և ձեռ—ներէջ հոգին, և քաղաքն անվստան վիճակի մէջ է: Ջուլա ներկայապէս աղքատ և կի—ստկործան քաղաք մ'է, թէպէտև ասերա—կաց մէջ անգամ կը տեսնուի իւր ունեցած շքեղ անցելոյն ազօտ պայծառութիւնն:

Իկեղեցիք շատ կեղեցիկ են, և մայր եկե—ղեցոյ պատերն նկարուք զարդարուած են, որոնք կը ներկայացընեն Ս. Գրիգոր Լուսաւորչի կրած շարշարանքները՝ զորս առաւ իրեն Տրդատ՝ իւր հօրեղբորդոյին՝ կը տես—նենք զարձեալ նոյն պատկերաց մէջ Նա—բուզղոսնոսթ թագաւորին պատմութեան յի—շատակ մի, որ պատահեր է Տրդատոյ և

1. Տրդատ հօրեղբորդին չէ Լուսաւորչի՝ այլ պարզ ազգական, ըստ աւանդութեան, և կամ թագաւորական արշակունի ցեղէ. ըստ նոր կար—ծեաց պր. Գեղզերի (հմմտ. Սիլլբեստր. հայկ. եկեղեցոյ, տպ. ի Վենետիկ, 1896, յէջս 103—104):

նորա պայտասկաններուն՝ վայրի խող դաւ—նալով՝ ի պատիւ այն յայրատ հայեցուածնե—րուն, որովք նայեցան Քրիստոսի պարկեշ—տագեղ ազականոյն Ս. Հոիսիսմէի և նորա զայնիկն վերայ: Ս. Գրիգոր ազօթիւք բշչից զիրենք՝ որոնք զարձեալ մարդկային կերպա—րանք ստացան, և ի յիշատակ այս հրաշալի գեպքիս հաստատեց հինգ աւուրց տօն մի՝ Սասաւորքը կոչուած, զոր ամենայն ճշգու—թեամբ կը պահեն մինչև ներկայ ժամա—նակս: Էկեղեցոյ որ անկարուց մէջ կը տես—նուի զարձեալ Տրդատ, որ իւր պալատա—կաններուն հետ միասին եկեղեցոյ մի հի—մունքը կը հաստատէ (յսմին ՅՕԶ) այն տե—ղը, ուր երկընդէն աստուածային լոյս մ'իջեր էր, ինչպէս որ տեսեր և պատմեք էր Ս. Գրիգորը: . . .

Գեղեցիկ է նաև Ս. Գեորգոյ եկեղե—ցին, ուր կը գտնուի մեծ քար մի, որ՝ ըստ աւանդութեան՝ Լլմիածնէն եկեր է այն սեղ—օղուն միջէն, և որոյ վերայ նստելով տե—ղացիքն կը բշչուին իրենց հիւանդութիւն—ներէն: . . .

Հայ ազգին ամենէն աւելի հարազատ ներկայացուցիչք կը գտնուին Ուրմիոյ աղի լճին շուրջականները, որոնք Նոյի սերունդ կը համարեն իրենց զիրենք, և միշտ բնակե—ր են այն սրբազան լեռան հովանոյն ներքև, որոյ վերայ իջեր է սասանն: Ուրմիոյ լիճն յիրաւի շատ տխուր կերպարանք մ'ունի. ա—րեւերեան և արևմտեան կողմերէն փակուած է լեռանց մեծամեծ շղթաներով, որոնք կը սկսին Սիւհնտէ և Ալլարատէ. իսկ հիւ—սիսէն՝ աղի գետեր կը թափին մէջը, որոնք ժայռոտ և ամուշ արհնոց միջէն կ'անցնին կու գան: Ըճին եղբքն բոլորովին ամայի են և զուրկ ո՛ր և է բուսականութենէ. իսկ ջուրն աղի և աւելի թանձր է քան Միւ—սեալ ծովուն ջուրն, որուն մէջը բնաւ չեն սպիրի ձկներ: Սոսոմ և Գոմոթ քաղաքաց արկածին նման գեպքեր կ'աւանդուին նա և այս տեղ, և մինչև իսկ կը պնդեն ոմանք՝ թէ տարուոյն մէկ քանի եղանակաց մէջ՝ լճին

1. Այդ աւանդութեան համեմատ եկեղեցին ևս կը կոչուի Լլմիածին:

խորերը կը սեռնուին ընդմիտած քաղաքներ-  
 րուն պարիսպներն : Գրեթէ երեսուն հինգ  
 տարի առաջ պարսիկ կառավարիչ մի ջանաց  
 շահաբեր ընել այս կողմանց արդիւնքները .  
 բայց երբ մեռաւ նա, լինն գարձեալ իրեն  
 նախկին ամալոթիւնը ստացաւ :

Ուրմիս շրջակայ գաւառաբայրը սակայն շատ  
 արգասանց երկիրներն են, որոց նման շատ  
 սակաւք կը գտնուին բովանդակ Պարսկաս-  
 տանի մէջ, և մերձակայ հայ քաղաքներն  
 ամենալաւ միճակի մէջ են քան ուրիշ կող-  
 մերու քաղաքներն : Օրինակ իմն, Պինասպ՝  
 շատ ծաղկած և բարգաւաճ քաղաք մ'է .  
 սններն այգիներու և թզենաց մէջ պահու-  
 սած են, փոզոցներն զետեղ կ'անցնին՝  
 որոնք բազմութեամբ կ'իջնեն մօտաւոր հիւ-  
 նալի լեռնէն Սիւննտի, յորմէ արեւ է քա-  
 ղաքն իւր անունը ( Պինասպ — ջրերու մէջ ) .  
 կրնայ նա աշխարհիս շատ սեղեցաց հետ մըր-  
 ցիլ իրեն ծաղկած դաւարութեամբ :

Այս տեղ հայ գերեզմանաց շիրիմներն  
 զուրկ չեն բոլորովին արուեստական գեղեց-  
 կութենէ, ուր կ'երևին հիւսածաձև զարդոց  
 ձեռնութեամբ հայկական ճարտարագետու-  
 թեան օրինակներ, որոնք բիւզանդական ոճը  
 կը յիշեցընեն :

Ամեն մէկ քայլին՝ զոր կ'ընէ մարդ զէպ  
 ի հիւսիս՝ կ'անծի հայ բնակչաց թիւն քաղա-  
 քաց և գետից մէջ . և երբ կը մօտենայ  
 մեծ լեռան և լեռասիւի, կը զգայ մարդ թէ  
 հայ աշխարհի բուն սրտին մէջ կը մտնէ . . . :

Երբ կը հասնինք Երասխայ գետահովի-  
 ւար, կարծես ամենայն ինչ կերպարանափոխ  
 կը լինի զիւթութեամբ մի՝ սեղալունքն ընկի  
 կառավարութեան բարբար ազդեցութեան  
 ներքև : Քաղաքներն հիւսանալի կերպով բար-  
 զաւաճ և յառաջադեմ միճակի մէջ կը զբա-  
 նուին : Մինչդեռ Երևան երեսուն տարի ա-  
 ռաջ, պարսիկ իշխանութեան ներքև, զրե-  
 թէ Զուլայի միճակն ունէր, հիմակ կատա-  
 րեալ երուպական քաղաք մի՛եղեր է, իւր  
 շուկաներով և ծառուղիներով, իւր թաարն-  
 ներով և ուրիշ արդի կենաց բոլոր պահան-  
 ջած իրերով . եւրոպացոց նման կը զգենուն,  
 և երևանցի հայ աիկին մի՝ առանց անցոր-  
 ցաց ուղաբութիւնը գրասելու՝ կարող պիտի

լինէր երթնելիք Լոնդայի Հայրը — Փարքի  
 մէջ : Արդի քաղաքականութիւնն՝ նոր ջրհե-  
 դեղի մի նման՝ որբեր տարեր է նոյն տե-  
 դերու բոլոր նախկին նկարագեղ իրերը և  
 սովորութիւնները, բայց միանգամայն ինչ որ  
 ահաւոր և անզուժ բաներ կային, Հին պար-  
 սիկ պալատը՝ հանդերձ իրեն սարսպան  
 ժայռով, ուսկից վայր կը զլորէր կառավա-  
 րին զանոնք՝ որ կ'արհամարհէին իրեն իշ-  
 խանութիւնը, կը ցուցընեն արդ օտարակա-  
 նին իբր հնագիտական հետաքրքրական ա-  
 ռարկայ մի :

Ուրպի որ կը մօտենանք Այրարատ  
 (Մասիս) լեռաւ, այնչափ աւելի կ'անճին  
 ջրհեղեղին ա' սլաւաց զրոյցը և աւանդու-  
 թիւնը : Ի Մասանդ, պարսիկ հողին վե-  
 բայ, շիրմէ մի կը ցուցնեն՝ ուր կը հանդ-  
 չին իբր թէ Մովսիսի Մարիամ կնոջ՝ ոսկոր-  
 ներն, որուն անուամբ կոչուեր է նաև եր-  
 կիրն (Մարանդա փոխանակ Մարունդայի,  
 որ հոս հաստատուած հառվայեցի գաղթա-  
 կանութիւն մ'է) : Այս կողմերս կը բուսի  
 յունապ կոչուած բոյսն, որ այնչափ կը նը-  
 մանի ձիթենոյ՝ որ Նոյ (հեղինակին կար-  
 ծեաց համամատ) շփոթեր ձիթենի կարծեր  
 է, երբ ստեր է տապանը դարձող աղա-  
 նոյն բերանը :

Ի Նախիվեան (քաղաք Նոյի, կը կոչէ  
 հեղինակն), ուր բնակեցաւ Նոյ իւր բոլոր  
 կենօք շափ, կը ցուցընեն տակաւին խոր-  
 հրդաւոր նահապետին շիրիմը, և այն որ-  
 թը՝ որուն պտուղն արբեցուց զինքը . բայց  
 ուրիշ նման որմտառունկ մ'այլ կը ցուցընեն  
 յերևան : Այրարատ լեռն, որ Երասխայ  
 գաղաղեցանոյն վերայ կը բարձրանայ իւր  
 երկու գագաթներով, կը յիշեցընէ (կ'ըսէ  
 հեղինակն) գունդիսաղի սեղան մի՝ որոյ վե-  
 բայ գտնուին անհաւասար բարձրութեամբ  
 երկու շարքերայ կաներ : Իւր ստորտը կը  
 գտնուէին երբեմն Հայոց ամենէն աւելի  
 ծաղկած քաղաքներն, և Բագրատունի թա-  
 վաւորաց մայրաքաղաքն Անի՝ իւր երեքհա-

1. Մովսիսի կնոջ անունն էր Մեգիստիլա,  
 ըստ Ս. Գրոց (Եւ. Բ. 21), անշուշտ սպա քոյ  
 ըը հասկնալու է այս տեղ :

րիւր եկեղեցիներով . իսկ ներկայիս՝ սակաւ եկեղեցիներ և սակաւ աւերակներ կան՝ որոնք յիշեցնեն անցեալ պայծառութիւնը :

Որ ճորիամայ հեղինակն այս տեղ շքմիածնի վերայ, մորա ճոխ թամբաբանիմ և (Գէորգեան) ճեմարանիմ վերայ՝ ուր երեքհարիւր հայ պատանիք կ'ուսանին, կ'ըսէ . կը յիշէ զբարտուցը՝ ուր կը գտնուին զբթէ ամէն լեզուով զրքեր . կը գովէ մոջարամաց մաքրութիւնը և ընդհանուր վաճառիմ և շէմքերու կարգաւորութիւնը, զոր բարդատնութիւնը Մոյսի հետ՝ ամհամեմատ վեր կը գտնէ զայս : Յատկապէս հիարամամը կը յիշէ զամեմատութիւնը, և այն թամբակն անարկամեմատը՝ որոնք կը պահուին այնտեղ, որոց մէջ կը յիշէ մակ հեզմակամ ժպտող մի՛ տապանիմ այն կտորը, զոր տուեր է հրեշտակն Մ . Յակոբայ մթըմացոյ . տեսեր է ճոխ ձեռագրատուը, որոյ մասին շատ զովեստներ կը շտայլէ, և այն : ճետոյ բարդատնութիւն մի կ'ըմէ երեք պետութեանց մերքե գտնուած չայնրու, թէ ի՞նչ աստիճան զարգացեր են կամ ո՞ր գիտութեանց և արուեստից մէջ, և ի նպատակ զգեղմուս կը յորդորէ երկուսիցը՝ ի մկատի առնուլ մորա մերկայ և անցեալ համգամամթերը, և այսու կը վերջացնէ իւր յօդուածը :

Հ . Յովհ . Թորոս .

## Մ Ո Ւ Բ Ա Տ Ե Ա Ն

### Հ Ա Մ Ա Լ Ս Ա Բ Ա Ն Ա Վ Ա Ն Վ Ա Բ Ժ Ա Բ Ա Ն

Ի Պ Ա Գ Ո Ւ Ա

ԵՒ ԲԱՑՈՒՄՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՆ ՏԱՐԵՐԱՆԻ

Սկեսալ 1876 ամէն մինչև ներկայ 1896 տարեթիւս՝ վենետիկ Մուրատ — Բափայէլեան վարժարանի վարչութիւնն՝ իւր ուսումնաւարտ ընտրելագոյն և քաջաշին աշակերտներէն զմանս, ուղարկեր է նաև Պաղուս յի խալախկան Համալսարանին ուսմանց այս ինչ կամ այն ինչ ընթացքը կատարելու, և ընդունելու ուսուցչապետական աստիճան (Dottorato), յօգուտ անձանց և ազգիս միանգամայն փասն տարուան փորձերու յաջող արդիւնք, քաջալեր մատուցին նոյն վարժարանի վարչութեան՝ զեռ անելի ընդարձակելու այսու-

հետև իւր գործունէութիւնը . և վերջին տարիներու մէջ, Միսիթարեան միաբանութեան կեդրոնական վարչութեանն բարեփոխուած ուսումնական նոր ծրարին համաձայն, նոր կեդրոնութիւն և զարգացումն տալով նոյն գործին, դիւրացնել համալսարանական ընթացիկ ուսումը՝ նիւթական և բարոյական միջոցներով, որպէս զի կարելի լինի այդ ընթացքին բարեաց հաղորդ ընել բազմաթիւ աշակերտներ, ինչպէս որ անմահ յիշատակաց վայելող բարերարին Մուրատայ նպատակն ու փափաքն եղած է :

Սյս եռանդեամբ շարժեալ հարկ եղաւ նախ պատրաստել պատշաճաւոր ընկարան և կարևոր եղած իրէ և անձինք, կազմելու համար կարգաւորապէս համալսարանական վարժարանի մը համայնքը, ըստ որում ներկայիս մէջ կը գտնուի : Զանազան գլխոց վերաբերեալ թէ՛ բարոյական և թէ՛ նիւթական պատճառք, առ այժմ անելի գործադրելի և խոհական ցուցին համալսարանական վարժարանի կառուցման համար առաւելութիւն շնորհել Պաղուսայի՛ բան ուրիշ ուսումնական — կեդրոն ծանուցեալ քաղաքաց Եւրոպայ :

Համալսարանական վարժարանս կարող է միանգամայն 15 ուսանողաց բնակարան, ուսեստ և ուսումնական ծախք և գործիք մատակարարել ձրիաբար :

Մինչև ցայսօր Պաղուսայի համալսարանին մէջ իրենց մասնագիտութեան ընթացքը աւարտող և ուսուցչապետական աստիճանա նշանաւոր հանդիսացած աշակերտք, որք առ ի փորձ յաշողութեան ուղարկուած էին զանազան ժամանակներ, եղեր են հետեւեալներն .

Պ . Գեորգ Ազնաւորեան, Կոստանդնուպոլսեցի, ընդունեցաւ աստիճան փաստաբանութեան, յամին 1868 :

Պ . Յարաբէր Ալեկեան, Կոստանդնուպոլսեցի, ընդունեցաւ աստիճան Երկրաչափաշարաւարապետութեան, յ' 9 Սեպտեմբերի 1882 տարուայ :

Պ . Վիկտոր Մարիենեան, Կոստանդնուպոլսեցի, ընդունեցաւ աստիճան Բժշկութեան, ի 18 Յուլիսի 1883 տարուայ :